



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Տարեկան գինն է . . . 130 դր.
Վեցամսեայ . . . 70 "
Եռամսեայ . . . 40 "
Մեկ ծանուցումը տարին 60 փարս է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 ֆն
եւ 16 ֆն կը պահեն :

Դուրս ելքմանը լրագրողներուն ծանուցումը
ծախքը ամեն մէկ թիւին համար 20
փարս է :
Լրագրոյն վերաբերեալ նմանի կամ որ
եւ իցէ դուրս թիւն, խմբագրին պիտի
ուղղուի : Եւ ամեն ծանուցում ծախ-
քը իրիցին վրայ է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՄԱՐՏ

Անգղիոյ նոր խորհրդարանին անդա-
մոց ընտրութիւնները Անգղիոյ ժողովրդի-
կան ուշադրութիւնը գրաւած են այս
միջոցին : Խորհրդարանին լուծմանը վե-
րայօք Թագուհւոյն յայտարարութիւ-
նը՝ որ վերջին լրագրողները կը բերեն մե-
զի, լուծեալ խորհրդարանին մէջ եղած
վեճերուն վրայօք յիշատակութիւն մը
չեներ . այլ՝ պարզապէս կրտէ թէ՝ «Մո-
լիս վեհապալաութիւնը պատշաճ դա-
տեց խորհրդարանը լուծել, որպէս զի
,,սահմանադրական ճիշդ կանոնաց հա-
,,մաձայն տեւութեան գործերուն վե-
,,ճակին վրայօք իր ժողովրդեան ունե-
,,յաճ կարծիքը իմանայ : Ար յուսայ որ
,,սպառազ խորհրդարանին իմաստու-
,,թիւնն ու հայրենասիրութիւնը ձեռք-
,,տու կը լըլայ տեւութեան պատիւը անա-
,,բառ պահելու եւ ժողովրդեան բարօ-
,,րութիւնը ապահովելու համար իր
,,ըրած անդուլ ջանքերուն : »

Այսպիսով եղած ընտրութիւններէն
կը հասկըցնեն, որ ժողովրդեան մեծադոյն
մասը լրտ Բալթիսթիւնի կառավարու-
թիւնէն գոհ է :

Նոր խորհրդարանին բացվելը ապ-
րիլ 1/13 ին պիտի ըլլայ :

Պարսից Հասնի դեսպան Ֆերուխ
խանը մարտ 8/20 ին փարիզէն Լոնտոն
կը ժամանայ՝ հետեւեալ օրը Ս. Թոմ-
աս-հոլմի շէնքին ներկայացաւ եւ իր դեսպանա-
կան գիրքերը մատոյց :

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴԱՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԵՆԳՂԻՈՅ ԵՒ ՊԵՐՍԻՅ ՏԵՐՐՈՒԹԵԱՆՑ ՄԵՋ

Հարաւայեալի մէջ էր
ՅՕԳ. Է.

Պարսից կառավարութիւնը կը խոս-
տանայ որ ներկայ դաշնագրութեան վա-
ւերութիւնները փոխանակվելն անմի-
ջապէս ետքը՝ առանց փրկանքի աղաւթու-
ղու Անգլիոյ տարանի մէջ Պարսից զոր-
քերուն պատերազմ ըրած ժամանակը
բռնկած ամեն գերիները . եւ այն ամեն
Անգլիոյնը՝ որ կամ իրեն պատանդ եւ
կամ քաղաքական պատճառներով իրեն
բանտարկեալ Պարսից տեւութեան որ
եւ իցէ մէկ կողմը պահած են, անոնք
ալ ազատ պիտի ըլլան՝ այս պայմանաւ
որ Անգլիոյնը ալ իրենց կողմանէ ա-

ռանց փրկանքի աղաւթու թողուն իրենց
ձեռքը եղած բոլոր պարսիկ գերիներն ու
բանտարկեալները :

Պէտք եղած ժամանակը՝ երկու դաշ-
նագիր տեւութեանց կողմանէ գործակալ-
ներ պիտի գրվին ներկայ յօդուածին պայ-
մանները կատարելու համար :

ՅՕԳ. Թ.

Պաշտպան տեւութիւնները խօսք
կուտան, որ մէկ մէկու երկիրներուն մէջ
գրած հիւպատոսին ու գործակաւորներն
նոյն տեւութեան մէջ ամենեւեալ ար-
տօնութիւն վայելող ազգին հիւպատոսա-
ցը հաւատարմութիւն պիտի վայել-
լին . նոյնպէս իրենց հպատակներն ու վա-
ճառականութիւնը ամենեւեալ ար-
տօնութիւն ունեցող ազգին հպատակա-
ցըն ու վաճառականութեանը հաւատարմ-
արտօնութիւն պիտի վայելին :

ՅՕԳ. Թ.

Ներկայ դաշնագրութեան վաւերու-
թիւնները փոխանակվելն անմիջապէս
ետքը Սեփիս Բրիտանիոյ դեսպանը Թէ-
րան պիտի դառնայ, ուր Պարսից կա-
ռավարութիւնը կը հաճի զանկալ ընդու-
նելու նոյն դրութեամբ եւ հանդէսով՝
որ երկու դաշնագիր տեւութեանց լրա-
զօր դեսպաններուն այսօր ստորագրած
զատ ծանուցագրին մէջ նշանակված են :

ՅՕԳ. Թ.

Պարսից կառավարութիւնը կը խոս-
տանայ՝ որ Սեփիս Բրիտանիոյ դեսպա-
նին Թէ-հրան դառնալէն ետքը մինչեւ ե-
րեք ամիս գործակալ մը ընտրէ, որ ին-
քիտանական կառավարութեան ընտրե-
լիք գործակալին հետ խորհրդակցութեամբ
Անգլիոյ ամեն հպատակներուն Պարսից
կառավարութեանն ունեցած դրամական
պահանջները քննէ ու դատէ, եւ ար-
դարութեամբ պահանջուած ստակները
կամ մէկանց եւ կամ մասն մասն վճա-
րէ՝ գործակալաց որոշումէն մինչեւ մէկ
տարի ժամանակէն աւելի չանցնելով :
Նոյն գործակալները պիտի քննեն այն ա-
մեն պարսիկներուն ու օտար տեւութեանց
հպատակներուն Պարսից կառավարութե-
անն պահանջած առնելիքները, որոնք մին-
չեւ Անգլիոյ դեսպանին Թէ-հրանէն ե-
լած ժամանակը Սեփիս Բրիտանիոյ
պաշտպանութեան ներքեւ էին, եւ ան-
կէ ետքն ալ նոյն պաշտպանութեան տա-
կէն ելած չեն :

ՅՕԳ. Թ.

Նախնիցայ յօդուածին ետքի կը-
տարին մէջ պարունակեալ պայմանները
մէկիւր առնելով, Բրիտանական կառա-
վարութիւնն ալ պիտի հրաժարի այսու-
հետեւ պաշտպանելն այն պահանջները՝
որոնք հիմա Սեփիս Բրիտանիոյ դես-
պաններուն ու հիւպատոսներուն ծառա-
յութեանը մէջ չեն . միայն թէ՛ պէտք է
որ այս կերպ իրաւունք մը չնորոգի կամ

չգործածվի ուրիշ որ եւ է օտար տեւութե-
անն : Սակայն, թէ՛ այս եւ թէ՛ ու-
րիշ ամեն մասերուն, Անգլիոյ կառա-
վարութիւնը կը խնդրէ եւ Պարսից կա-
ռավարութիւնն ալ կը խոստանայ, որ
նոյն արտօնութիւններն ու աղաւթու-
թիւնները պիտի շնորհվին Պարսիստա-
նի մէջ եւ պիտի գործածվին Բրիտանա-
կան կառավարութիւնն եւ անոր ծառա-
ներէն ու հպատակներէն, եւ նոյն յար-
գանքն ու անհաճութիւնը պիտի վայե-
լին՝ որն որ ամենեւեալ արտօնութիւն
վայելող օտար կառավարութեան եւ ա-
նոր ծառայներուն ու հպատակացի
կը տրվի եւ կը վայելին :

ՅՕԳ. Թ.

Պաշտպան տեւութիւնները ներկայ
դաշնագրութեամբ կը նորոգեն 1851
օգոստոս ամսոյն մէջ (1267 չեփալ) ի-
րարու հետ ըրած պայմանագրութիւնին
Պարսիսի ծովածոցին մէջ դերեքտա-
ռուտութիւն խախտելու համար, եւ կ'որո-
շեն նաեւ, որ նոյն պայմանագրութիւնը
իր լինելով պայմանաւորութեանն այսինքն
1862 օգոստոսէն ետքն ալ նորէն տալը
տարի շարունակէ, եւ անկէ ետքն ալ որ-
չափ երկու ժամանակ որ երկու դաշնա-
գիր տեւութիւններէն մէկը պաշտօնա-
կան յայտարարութեամբ մը աւրած չը-
լայ : Այս յայտարարութիւնն ալ դարձ-
եալ մինչեւ տարի մը գործադրութիւն
չպիտի կրնայ դառնալ :

ՅՕԳ. Թ.

Ներկայ դաշնագրութեան վաւերու-
թիւնները փոխանակվելն անմիջապէս
ետքը, Անգլիոյ զօրքերը եւ պիտի կե-
նան ամեն կերպ թշնամեական գործեր-
ներէ Պարսիստանի դէմ, եւ Բրիտանա-
կան կառավարութիւնը կը խոստանայ նա-
եւ, որ Պարսից զօրքերը Հերաթի ու
Անգլիոյ տարանի հողերէն ելելու վերա-
բերեալ պայմանները, նոյնպէս Անգլի-
ոյ դեսպանին Թէ-հրան մանկու ժամա-
նակը անոր ըլլալը ընդունելութեան վե-
րաբերեալ պայմանները կատարեալ գոր-
ծադրութիւն դառնելու պէս, Անգլիոյ
զօրքերը անյապաղ պիտի քաշուին Պար-
սից բոլոր նաւահանգիստներէն քաղաք-
ներէն ու կղզիներէն : Բայց Բրիտանա-
կան կառավարութիւնը կը խոստանայ,
որ դաշնագրութեանց վաւերութիւնն-
ը փոխանակվելն մինչեւ այն ժամանա-
կը անգղիական զօրքերուն հրամանատարը
զիտմուր բան մը չպիտի ընէ Պարսից
հպատակներուն առ Հասնի ունեցած
հաւատարմութիւնը խախտելու համար,
որն որ ընդ հակառակն Բրիտանական կա-
ռավարութիւնը զօրացնելու կը փափա-
քի : Ասկէց զատ Բրիտանական կառավա-
րութիւնը կը խոստանայ, որ Պարսիստա-
նի հպատակները հարկ եղածին չափ

ապահով ընան Անգլիոյ զօրաց ներկա-
յութենէն յառաջ եկած ամեն անպա-
տեհութիւններէն, եւ այն զօրքերուն գոր-
ծածութեանը հարկաւոր ըլլալը ամեն
նպարները իրենց անցուկ դնով անմիջա-
պէս վճարվին բրիտանական մատակարար-
ութեան կողմանէ : Պարսից կառավար-
ութիւնը կը խոստանայ հրաման տալու
իր իշխանութեանց որ անգղիացւոց զօ-
րքերուն ձեռնառու ըլլան այն նպարները
դառնելու :

ՅՕԳ. Թ.

Ներկայ դաշնագրութիւնը պիտի վա-
ւերանայ, եւ վաւերութիւնները պիտի
փոխանակվին Պաշտպան մինչեւ երեք ա-
միս, եւ թէ՛ կարելի է՝ աւելի շուտ :
Արդ ի հաւատարմութիւն, երկու տեւութե-
անց լրագրող դեսպաններն ստորագրեցին
այս դաշնագրութիւնը եւ իրենց գնա-
ղորդութիւն կնքեցին :

Արարեալ ի փարիզ, չորս օրինակ,
ի չորրորդ աւուր մարտի 1857 ամի Տեա-
ռին մերոյ :

(Պարսից) ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՏԵՐՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՍԵՒԷԷ

Աւարից եւ Սարենիայի կառա-
վարութեանց մէկ մէկու հետ պարզվե-
լուն լուրը ստուգվեցաւ :

Աւարից դեսպանը Թուրքիոյ եւ
Սարենիայի դեսպանը Պէ-հրանէն
չեփեցան : Այնպէս սարենիացւոց
պաշտպանութիւնը Պաշտպան դեսպանին
յանձնելոյցաւ :

Այնպէս մէջ խօսք կը պտուրի, թէ
Պաշտպան կառավարութիւնը միջնորդու-
թիւն ընել ուղիւ է այս գծով իրենց
խաղաղելու համար :

Անգլիոյ ծովակալութիւնը կը շարու-
նակ իր մեծ պատրաստութիւնները Չի-
նաստանի դէմ : Արդէն խրված զօրու-
թեան զուամարը 58 պատերազմական նա-
ւի կը հասնի, որոնք 812 թնդանօթ եւ
10000 զամաքային զօր կը կրնան : Թէ
որ պարագանքը պահանջեն, այս զօրու-
թեան վրայ պիտի աւելնան նաեւ Խա-
ղաղական Ուկրանայի մէջ եղած անգղե-
ական նաւախուժութիւն 16 պատերազմական
նաւերը :

Չինաստանէն եկած լուրերէն կիմա-
զի, որ յունիս 26 ին Չինացիները անգ-
ղիական Քաշմիր անուն նաւը այրել ու-
ղիւ են, բայց չեն յաջողեր :

Փետրվար 10 ին ալ Չինացւոց
Ժօնք ըսուած պատերազմական նաւերէն
հարկաւոր չափ անգղիական չորհրդա-
պատերազմական շոգենաւին վրայ յար-
ձակել են, բայց յիշեալ շոգենաւին թիւն-
դան օթները զանաք ցրուցան ըրեր են :

Նշանակել խնդրոյն վաղօր երրորդ դեպքական ժողովը ամսոյ 13/25 ին եղաւ Փարիզի մէջ Բրուսիոյ դեսպանին ներկայութեամբ: Օւղիցներէի դեսպանը ներկայ էր:

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Պայտերական հրամանաւ

Բարձրագոյն Պրան արտաքին լեզուաց թարգմանատան անդամ Խորասանձեան մեծարգոյ Թովմաս Էֆէնտի-ին երրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ

Մայիս 22 ին ուրբաթ օրը յիշատակաց արժանի նշանաւոր օր մը եղաւ ազգին համար: Երջն օրը Պատրիարքարան գումարուած ընդհանուր Դպրոցոյն նկարագրութիւնը որչափ ալ աշխատիք քստ արժանւոյն ընկու, անհնար կերեւի մեզի: Հին ներկայ գտնուողները միայն կրնան ձեռք գաղափար մը ունենալ այն ընդհանուր գոհութեան եւ ցնծութեան վրայ որ ամենուն զէմքին վրայ կը տեսնուի:

Ուրբաթ առաւօտէն սկսան մայրաքաղաքի մէջ գտնուող երեք Երջնայիս կողմերը, վարդապետները եւ քահանաները, Պ. Պօլսոյ երեւելի սեղանաւորները, արհեստաւորաց դասերուն երեսփոխանները եւ զինական ու ազգային տնային Պատրիարքարան գումարուելու եւ ընդհանուր Դպրոցը կազմելու: Մ. մեն մարդ յատուկ փափաքով մը կը դիմէր. վասն զի երկու երեք օր առաջ Պատրիարքական հրաւիրանաց տոմսակները կը ծանուցանէին թէ ազգային կանոնադրութեան համար էր նոյն օրուան ընդհանուր Դպրոցով գումարումը:

Երբեք հարկւրէն աւելի ազգայինը մայրաքաղաքիս ամեն կողմերէն եկիր էին, եւ միայն քանի մը հրաւիրեալ սաւկաւաթիւ անձինք՝ օգին խոնաւութեանը պատճառաւ չէին կրցեր դալ:

Դամը հինգ ու կէսին ազգային երեսփոխանը Սրբազան Պատրիարքէն հրաման խնդրեց ատենար բանալու: Ուստի Վորին Սրբազնութիւնը համառօտ եւ սրտաշարժ ատենաբանութիւն մը ընելէն ետքը, նստաւ իւր գահը ու խօսքը ձգեց մեծարգոյ Դոքտէթ Մարկոսեան Վրիգոր Էֆէնտիին որ այսպէս սկսաւ:

Սրբազան Հաջը, մեծապատիւ Երջն եւ սիրելի եղբայր:

Յայտնի է ամենեցունցը որ աշխարհի մէջ ամեն տեսակ դժբերք կանոնաց ներքեւ գրուելով բարեկարգ ընթացք մը կրտսանան: Բարդ տիեզերաց մէջ այն ազգերը որ կարգ կանոն ունին, յոռաշարժ եւ լուսաւորեալ եղած են. եւ ընդհանրապէս անոնք՝ որ անկարգ ու անկանոն են՝ ետ մնացած ու զգալի փնջակ մէջ կը գտնուին:

Մեր սիրելի ազգն ալ իւր ազգային ներքին կառավարութիւնը, ընդհանրապէս մեծագործ տեսութեանն Օսմանեան, բարեկարգ ընթացքի մը մէջ գտնուելու համար յատուկ կանոնադրութեան մը կարօտ ըլլալը զգաց, բայց ոչ թէ հիմա, այլ շատ ժամանակէ հետեւ: Ասիկա երեք չորս տարի առաջ ազգային յայտարարութիւն մը ըրաւ. եւ սրբազան Պատրիարքէն խնդրեց ազգային կանոնադրութիւն մը: Ասիկա մէկ ու կէս տարի առաջ երբ քանի մը զինուոր դժբերութեան համար ընդհանուր Դպրոցը գումարուած էր, դարձեալ կանոնադրութիւն խնդրուեցաւ, եւ այն ատենը զիտեան եւ խոհեմ եկեղեցականներէ ու աշխարհականներէ բաղկացեալ յատուկ յանձնարարա-

կան ժողովոյ մը յանձնաւեցաւ այս դժբեր: Երկար ժամանակ աշխատեցաւ յանձնարարական ժողովը, ընկնաց իւր պաշտօնը եւ գրած պատուական կանոնները ներկայացուց Վերագոյն Դպրոցին:

Մանց երեսուն երեք ընդհանուր ժողովոյ մը գումարման կարօտ եղած էր: Ուստի ասիկա չորս ամիս առաջ Սրբազան Պատրիարքին վերահաստատութեան ետքը ընդհանուր Դպրոցը գումարուելով, առջին յանձնարարական ժողովոյն գրած կանոններուն քննութիւնը՝ երկրորդ յանձնարարական ժողովոյ մը յանձնաւեցաւ: Երբ առաջինը հետ մէկտեղ զիւր յորեկ աշխատելով, աւարտեց իւր պաշտօնը եւ կարգադրուած նոր կանոնները ներկայացուց այժմեան Վերագոյն Դպրոցին:

Հին ալ դարձեալ վերաքննուելով, յարմար գտնուած փոփոխութիւնները եւ սրբազնութիւնները եղան, եւ այսօր պիտի կարգադրուին պատկաւելի ընդհանուր Դպրոցոյն ատենան:

Վերագոյն Դպրոցը այս կանոնադրութիւնը շնորհիւյցներ իւր կատարեալ դժբերք մը, չի պահանջեր որ ասիկայ ընդհանուր եղածին պէս. այլ ներկայ գտնուող ամենայն ոգի իրաւունք ունի եւ ազատ է իւր գաղափարը յայտնելու իւրաքանչիւր յօդուածին վրայ, պատկաւութիւնները նշանակելու թէ որ կան նէ, եւ այնպէս ընդունելու եւ հաստատուելու:

Ներկայ կանոնները ինչպէս որ պիտի տեսնէք, երկրաւոր հաստատուելու բաժնուած են:

Ազգային դպրատունները բարեկարգելու համար Ուսումնական ժողով մը եւ յատկապէս Երբայիս ազգային վարժարաններուն խնամք տանելու համար յատուկ Եւրոպական ժողով մը հաստատուեցաւ:

Ս. Ս. Ս. ժողովները որ յիշուած են այս կանոնադրութեան մէջ՝ յատկապէս ալ մասամբ իւր կային. միայն զանոնք բարեկարգելու կամ ընդհանուր կերպիւ հաստատուելու համար յատուկ կանոններ գրուած են:

Դպրոցականաց ուշադրութիւնը այսպէս հրաւիրելիս եղաւ՝ կանոններուն յօդուած առ յօդուած եւ ծանր ծանր ընթերցանութիւնը սկսուեցաւ: Մ. մեն մէկ յօդուածը գրողներուն անաշուտ զտուր ընդհանուր մէկմէկ ապացոյց երկուսն, եւ բոլորն ալ յատուկ ուշադրութեամբ մը անդիմելով՝ ընդհանուր Դպրոցով մէջ ամենուն բերնէն հաւանութեան եւ օրհնութեան ձայներ կը լսուէին:

Միայն ընդհանուր Դպրոցով կարգաւորութեան կանոնին վրայօք քանի մը զիտողութիւններ եղան, որով աւելի յայտնուեցաւ թէ որչափ ուշադրութեամբ պաշտպանուած է իւրաքանչիւր անհատին յատուկ արտօնութիւնը: Երջն կանոնաց համեմատ, ամեն Ուսումնորչական հայ, մեծ ու պզտիկ, հարուստ եւ աղքատ, Պօլսեցի եւ ուրիշ քաղաքացի, իւր կարգը պիտի ունենայ ընդհանուր Դպրոցով մէջ գտնուելու. ուրիշ բան չու պիտի պահանջուի՝ բայց միայն ազգային ժողովոյ մէկուն անդամ ըլլալը յարմարութիւն կամ արժանաւորութիւն մը:

Եւստիպիս առայժմ բաւական կը համարին խօսելու ազգային կանոնադրութեան վրայօք, վասն զի կը յուսանք որ մօտեւր ապագայութեամբ հրատարակված պիտի տեսնենք զայն. ուստի բարեկարգ հասարակութեան կը թողունք անոր գովասանութիւնը:

Յիշեալ կանոնները ընդհանուր Դպրոցով միաբան հաւանութեամբ հաստատուելէն ետքը՝ յարգոյ Դպրոցականները քիչ մը հանգստութիւն առին ինչչեւ որ ստորագրութիւնները լրացան:

Ասիկա ետքը նորէն մեծ սրահը դուրսարուեցան ու մեծարգոյ Դոքտէթ Էֆէնտիին կրկին սկսաւ խօսելու այսպէս:

Այս շնորհաւորեալ արգոյ հասարակութիւնները եւ ընդհանրապէս բոլոր ազգը նոր կանոնադրութեան հաստատուելուն համար: Մասի կը յուսանք որ այսուհետեւ ազգային ներքին կառավարութիւնը բարեկարգ ընթացք մը պիտի ունենայ: Բայց այս կանոններուն գործադրութիւնը բոլոր ազգայնաց միաբան օգնութեանը կարօտ

է: Մանցմով Վերագոյն ժողովը եւ առ հասարակ բոլոր միւս ժողովները ծանր պարտաւորութիւններ տակ կը մտնեն, եւ այս պարտաւորութիւնները բարեկարգ հասարակութեան գրասխան օգնութեանը վրայ պիտի կատարուին:

Վասն զի պարզանայ արժանի ազգային հիւանդանոց մը ունիլը՝ որուն մէջ տեսակ տեսակ անտերունց ազգային պատապարտած են:

Երկրորդ՝ ազգային լուսաւորութեան աղբիւր ըլլալը, դպրատուններ ունիլը՝ որ յատուկ խրանակը եւ նոր բարեկարգութեանը կարօտ են:

Երրորդ՝ բարեկարգութեան հաստատութիւն մը ունիլը, այսինքն անանի աղքատաց անտուր որ հարգաւոր սղորմութեան կարօտ խոցալաց օգնութեանը համար հիմնոված է:

Չորրորդ՝ միւս երեք հաստատութեանը չափ կարեւոր եւ ազգին պատուին հետ կապուած Պատրիարքարան մը ունիլը:

Մանց ամենուն ծախքը թէ հաստատ եւ կանոններով եւ թէ ազգային տուրքերով կը մատակարարուին:

Մանցմէ չունեմ աւելի բայց համահասարակ կարեւորութիւն մը ունեցող հոգեւոր դպրոցի մը հաստատութեան մէջ կարօտութիւն կը տեսնենք:

Հայոց տղերք մեծ բաղնիստը եւ ընդարձակ երկիրներ տարածուած է, ժողովրդաց հոգեւորութիւնը բազմաթիւ կը թեւալ կարգաւորներու կարօտ է, որոնց թիւը զգալիաբար խիստ պակաս կը դաննէ:

Մանց խօսելէն ետեւ Դոքտէթը առաջին չորս հաստատութեանց համառօտ հաշիւը ընդհանուր ժողովոյն ներկայացունելով՝ պակասած գումարները, նմանապէս նորոգ հաստատութիւն հոգեւորականաց վարժարանին պէտք եղածը իմացուց: Ետքը քսաւ:

Այս գումարները ազգային տուրքերով պիտի հոգացուին, որոնք թեպէտ առաջին տարիներէն աւելի պիտի ըլլան, բայց այնպէս անօրէնութիւն մը եղած է, որ յատկապէս տուրք վճարողները սովորականէն քիչ մը աւելի հաստատելով, եւ միւսեւ հիմա իրենցմէ չուրուելուն համար չի տուրքներն ալ իրենց կարողութեանը ներքեւ չափ տուրք վճարելով, պէտք եղած գումարները պիտի ժողովին առանց ազգը ծանրութիւն մը դառաւ:

Այս չեմ հաւատար որ բարեկարգ հասարակութեան մէջ գտնուին այնպիսի անխիղճ մարդիկ որ վերոյիշեալ ազգային ամենապարտաւոր հաստատութեանց համար իրենցմէ պահանջուէին չափաւոր տուրքը խնայելու կամ թէ հաստատելու ժամանակը դժուարութիւն ընեն, մասնաւոր որ այսուհետեւ ազգային կանոնադրութեան համեմատ իւրաքանչիւրն տուածը պիտի խնայուի եւ ինչ բանի ծախք ըլլալը ամենուն ծանուցուի:

Բայ նոր անօրէնութեան, ազգային տուրքը տասնական դուրս չուրի փոխ զայնուած է. ուստի միւսեւ տարբեր գումար տուրք կարողութիւն ունեցողներ տուրք պիտի տուուն, որպէս զի ազգային դժբերք օգնութեան ըլլալը ազգասիրական փափաք ունեցող ամեն մարդ ասիկա ունենայ իւր կարեացը չափ մասնակից ըլլալու: Երբեք հարկաւորեալ գումարին երեք քառորդ մասը սիրով եւ հաճութեամբ տուրքաւորուած է. կը մնայ միայն մէկ քառորդ որ հնարական ժողովոյն աշխատութեամբ այսուհետեւ պիտի գործի արդարութեամբ:

Այս մնաց հիմա միայն աղաւել, որ յատկապէս Սրբազան Պատրիարքին օրերը, տնային աղքատները, հիւանդանոցին խոցալակները եւ բանտարկեալները անօգնական չի ձգուի. համար ժողովներ տուրքեր ժամ յառաջ վճարելու բարեհաճ հասարակութիւնը:

Այս խօսքերէն ետքը Վերագոյն Դպրոցին չորս ամիսէ ի վեր զիւր յորդու գումարուելով կատարած գործերը համառօտաբար յիշատակուեցան, զոր օրինակ երեւելի դատարան որոշումները. դատաւարանի Հայոց տեսակ տեսակ հոգեւոր եւ աշխարհային կարօտութեանը վերաբերեալ հրամանադրները Բարձրագոյն Վանին առնուելով. Փարիզի վարժարանին ազգային ընտրուել կայանարական կառավարութեան կողմէն թոյլտուութիւն ըլլալը. Վանիի կողմէն իրենցեւոյն, զրգրատան եւ առաջնորդարանին քանի մը բարեկարգ անձանց նպատակը միայն շինուելիքը առանց ազգիս ծանրութիւն

տարւ. Սամաթիոյ աղջկանց դպրատան կառուցուելը. Խարթալի մէջ աղքատ աղջկանց համար արուեստարան մը հաստատուելը. Խաւիւտարու ձեմարանին մօտեւր նորէն աղջկն յանձնուելիքը. տեսութեան դպրոցներն ընդունելիք հայ աշակերտաց թիւը տասնուիւց հոգի ըլլալիքը, եւ ասոնց ուսումնական ժողովոյ քննութեամբն ընտրուելիքը, եւ արքունի բժշկութեան դպրոցը աւելի հայ աշակերտներ ընդունել տայու. աշխատուելը. եւ քստ խնդրոյ ընդհանուր Դպրոցին Եւրոպայէ մի սրբազան Պատրիարքին սուրբ Օտակէն ետքը Պ. Պօլսոյ գայու խոստացած ըլլալը եւ ասոնց նման ազգօգուտ գործողութիւններ:

Այս քննութիւնը այս նկարագրութիւնն ինչ վերաբեր ընելով թէ անցեալ ուրախ օր Պատրիարքարան գումարուած ընդհանուր Դպրոցը ցնծութեան, սիրոյ գոհութեան եւ անպարար օրհնութեանց ժողով մըն էր:

Փարիզին մարտ 9/21 Թուով հետեւեալ ծանուցումը կը գրեն մեզի լրագրոյս մէջ հրատարակելու խնդրանք:

«Թեպէտ եւ Փարիզի ազգային վարժարանին աշակերտները պարտաւորեալ են ստեղծ ստեղծ նստել իրենց ծրարողացը, եւ միւսեւ հիմա 20 օրը մէկ մը անվերջ կը գրեն ամենքն ալ, բայց վարժարանին վերատեսուէնքը տեսնելով որ ոմանց նամակները ուշ հասնելով ծնողաց ձեռքը՝ անոնց աւելորդ անհանգստութեան պատճառ կըլան, որոշեցին որ այսուհետեւ աշակերտաց նամակները (որ ամիսը մէկ մը պիտի գրուին) ուղղապէս Փարիզի թղթատուներ յանձնեն, եւ կը խնդրեն ծնողներէն որ իրենք ալ մարդ յուղարկին ամիսը մէկ մը Պօլսոյ թղթատուներ, եւ իրենց անուովը եկած թուղթերուն ծախքը վճարեն եւ ընդունին: Իսկ իրենց առ որչին գրած պատասխանները կրնան այսուհետեւ ալ ձեռք գրասենեակը յանձնել, որով անյայտագ եւ անկորուստ կը հասնին վարժարանը:»

Մայրաքաղաքիս մէջ բնակող ազգայնաց շատերուն յայտնի է, որ Հայ բողոքականներէն իրենց համար հրատարակուած Եւրոպայէ անուն լրագրին 56 երրորդ թիւին մէջ մեր ազգը զրպարուած էր մտայնական ամուսնութեան մը առաստաղաւորութիւնով: Այս անմէկնիկ զրպարուութեան պէտք եղած պատասխանը տալու համար, կըցաւինք որ պիտի պարտաւորինք նոյն երկրութեան վրայ տրուած աղաւաղեալ լուրերը կրկին լրագրոյս մէջ համառօտուելու, որպէս զի մայրաքաղաքէս հեռու բնակող ազգայիններն անոր վրայ անգիտութիւն ստանան, ու եղածին ճշմարիտ պատմութիւնն ալ ըրոյծ ժամանակին ընթերցողները Եւրոպայէ ին նիրաւ եւ վառ խորհուրդներով լեցուած ըլլալը յայտնի տեսնեն՝ բաղաւորութեան երկու առաքելայնները աչքերուն առջեւ ունենալով:

Ահա Եւրոպայէի աղաւաղեալ պատմութեան բովանդակութիւնը:

«Ուստի միայն քաղաքը բնակող բոլոր թեմաւորներէն եղալայ միայն օրերս աւուսանացաւ (սուտ) հայ աղջկան մը հետ, իր ծնողքին ուղղութիւն ու հաւանութիւն նովը (մեծ սուտ). եւ հարմարեցին այսինքն պատկին արարողութիւնն ալ հրատարակուաւ կատարուեցաւ բոլոր թեմաւորներէն»

զից ժողովարանը նոյն եկեղեցոյն հո-
վել Գ. Սկրտչին ձեռամբ, ուր նաեւ
ներկայ էին Հայագրի բարեկամներ:

«Ռոտովի» առաջնորդին փոխա-
նորդ վարդապետը աւ բանը լսելով (ե-
ղած չունի որ լսէ) հրապարակաւ բա-
նադիրը հարսն ու ծնողքը եւ ամուսնու-
թիւնը ունայն ու պարագայ հրատարակե-
ր է: Ըմանալով իրենց քանի մը օր էրիկ կըն-
կան պէս մէկ տեղ մնալէն ետեւ (անպատ-
կառ սուտ) հարսին ծնողքը բանադիրանքէն
վանալով՝ հարցով մը հարար իրենց
տունը տարին ու անկէ ի վեր հոն կը
մնայ:

Ես առաջադրեալութեան ետքը՝
Լեւոնի Գ. խմբագիրը շատ մ'ալ
զօրութեամբ խորհրդածութիւններ ու սա-
սանեցողիչ սարսափալիքներ ըրած է, ու
ընդհանրապէս մէկ առ մէկ պիտի տես-
նանք:

Գանք հիմա բուն եղելութեան ճիշդ
պատմութեան:

Ես պատմութեան առարկայ եղող
Սրբուհի անուն Լուսաւորակոն Հայ
օրիորդը հանգուցեալ Չարգի Գ. Սարգ-
սի աղջիկն է, որ իր մօրը հետ Թեքրիտաղի
Սուրբ Թադեոսի թաղը կը բնակէր:
Ետեւ զբաղի մը ունին եղբի Գերձակ
Յարութիւն անուամբ, որ իր բնասնե-
քը երթուն տարի է ի վեր իրենց տանը
քով ապրելուցն այս երկու տունին բնա-
կիւնները ազգականի պէս սիրով վաստ-
հութեամբ ու մանրամասն կը տես-
նուին, ու միշտ իրարու սունկէն զատ-
ւոր եղին:

Թեքիտաղ մօտ օրերս դերձակ Յարութի-
ւնը իւր տունը վաճառեւ ուրիշ հե-
ռու թաղի մը մէջ տուն գնած է եղբի,
բայց իրենց առջեւ դրացիներուն հետ միշտ
մի եւ նոյն սիրով ըլլալուն իւր կողա-
կէքը ժամանակ ժամանակ անոնց տունը
կերթայ ու անոնց Սրբուհի աղջիկը կու-
նէ իւր տունը կը տանի ու երբեմն ալ մօր
պէս քանի մը օր կը պահէ ու կրկին իւր
տունը կը տանի եղբի:

Ես անգամ Գերձակ Յարութիւ-
նին կրկին դարձեալ յիշեալ աղջկան տու-
նը գացել ու մօրմէն խնդրեմ է, որ աղ-
ջիկը իրենց տանը իր տունը տանելու, եւ ինչ-
պէս որ առաջ ալ ըրած է, մէկ քանի օր
իր տունը պահէ ու կրկին իրեն բերէ:

Սրբուհի մայրը բողբոջին միամիտ
ըլլալով, Գերձակ Յարութիւնին կնոջը
կը յանձնէ իւր աղջիկը, ան ալ կանսէ իւր
տունը կը տանի:

Հոն երկու օր մնալէն ետեւ, այն խա-
բերայ ու անխնայ կրկին ուրբաթ իրիկուն
«Եւ աղջիկ», կըսէ Սրբուհիին, Սուրբ
Խաչի թաղը մօրաքրոջ տունը կը թանջը,
ու այսպէս խաբելով աղջիկը կանսէ իւր
բողբոջական Գեորգի անուն փեսին տունը
կը տանի: Հոն մնալէն զիշերուան ժա-
մը չորսը կենալէն ետեւ, ընտանեօր հան-
դերձ աղջիկը կանսէն բողբոջական ժո-
ղովարանը կը տանին ու հոն Յօհաննէս
անունով այրի բնակէր մը ցոյց տալով
«ահա այս քու այրդ է ու զոն ալ ասոր
կրկին ես», կըսէ: Ես անսխալութեամբ
աւանդութիւնը խեղճ աղջիկը տեսնելով,
յայտնի բան է թէ որչափ քրտմամբ ու
գոգոս հղած պիտի ըլլայ, մտածելով,
նախ որ ինքը արդէն նշանուած է նոյն
քաղաքէն Սկրտչի անուն իրեն պէս Լու-
սաւորակոն Հայ երիտասարդի մը հետ
(որուն պատմութիւնը վարը պիտի ընենք)
որմէ բնաւ ետ կենալու կամք չունի: Բ-
մտածելով որ ինքը Լուսաւորակոն
հայ ծնած ու նոյն անարատ կրօնիւր աս

աշխարհէս ելելու հաստատ դիտարկու-
թիւն ունի: Գ. մտածելով որ ինք Լու-
սաւորակոն հայ ալ եղած չըլլայ ու
արդէն նշանուած ալ չըլլայ, հիմա իւր
ընտրուած նոր այրը բնակէր մըն է այրի,
որ հաճելի բան մը չէ: Գ. մտածելով
որ եթէ ընդունելի մէկն ալ եղած ըլ-
լար, ու առջի նշանածէն ետ կենալ ու-
զէր, ամեն քրիստոնեայ ազգաց մէջ հաս-
տատուած սովորութեան համեմատ ա-
մանացող զաւակներուն ծնողքն ալ պէտք
էր որ ներկայ ըլլային իրենց որդեօրը հար-
սանեաց ուրախաւիթ հանգեսը վաղել-
լու: Ենչու չէ հայաստանեայց մեր Սուրբ
Եկեղեցոյն ամուսնութեան վերաբեր-
եալ սուրբ խորհուրդներուն, արարու-
ղութիւններուն ու հանգէսներուն սո-
վորեալ Լուսաւորակոն աղջիկ մը ա-
նանկ դաւաճանութեամբ իր ծնողքէն
զատուելու եւ բանի ամուսնանալու չէր կը-
նար զիջանիլ: Ես վիճակին մէջ աղջիկը
տեսնելով որ ինքը միակ մնացել է,
ժամանակը կէս զիշերուան հասած, փո-
ղոցներուն մէջ մարդ չկայ եւ ամեն մարդ
խոր քունի մէջ, իր ազատուելուն յոյսը
առաւօտեան ձգելով՝ բնաւ չէ ուզել յայտ-
նի ընդդիմութիւն մը ընել: Աւտի եր-
բոր ժամը վերջի ժողովարանէն ելելով
զինքը բողբոջական Յօհաննէսին տունը
տանելու գնաց, առանց ընդդիմութիւն
ընելու հետեւին դացի է, մտաք մէջ
հաստատ առաջադրութիւն ընելով՝ որ
իւր անձին պահպանութեանը վրայ հրա-
կէ: Հոն մնալէն առտու մնալէն ետեւ, հե-
տեւեալ օրը Յօհաննէսին մայրը կը պատ-
րաստուի որ աղջիկը առնէ բաղնիք տա-
նի. ան ալ այս բարեպառն հաւթի
չի փախցունելով՝ կը հաճի երթալու, ու
մէկ տեղ կը լինի: Յօհաննէսին մայրը
երբոր ներս կը մտնէ լուացուելու, աղ-
ջիկը հոն գտնուող Լուսաւորակոն հայ
կանանց իր զիշերուան ետեւ, իւր մօրը դե-
ռի զիշերուան, այս դաւաճանութեան իւր
ազատուելու փափաքը, իրենց տունը եւ
մօրը անունը անոնց կը հասկընէ, եւ կը
խնդրէ որ երթան շուտով եղելութիւնը
անոր խմբինն որ գայ զինքը ազատէ:

Ես լուրը իւր մօրը կը համի, մայ-
րը իսկոյն իր մեծ աղջիկն ու զբաղի կին
մըն ալ հետն առած բաղնիք կերթան ու
աղջիկը կանսէն տուն կը բերեն՝ զեր-
ձակին անկողնի կինը լուացուելու զա-
րած ժամանակը:

Ես անցքերը անցած միջոցին՝
աղջկան բուն նշանածը Գ. Սկրտչի-
չն ալ Թեքրիտաղ կը համի, որ քանի
մը տարի է ի վեր դուրսը մնալու պարտա-
ւորուած է եղբի նշանուելէն ետքը արքու-
նի նաւարանը ծառայութեան տարուե-
լուն պատճառաւ: Աւտի երբոր իր նը-
շանածին վտանգը իմացել է, իսկոյն
առաջնորդարանը գացել ու վարդապե-
տին ու եկեղեցական հոգաբարձուացը ի-
մացուցել է որ ինքը պատրաստ է իր նշա-
նածը առնելու: Ետեւ ալ աղջկանը
պատահած բռնական դէպքը եւ աղուն
այս ինչիւր Սրբազան Պատրիարք հօր
գրելով, անոր կամքը իմանալ ուզել են:
Սրբազան հայրն ալ իսկոյն Թեքրիտաղի
կառավարին եւ տեղւոյն իշխանաց մաս-
նաւոր նամակներ գրելով խնդրեմ է որ աղ-
ջիկը տեղւոյն քաղաքական ժողովը տանին
եւ անոր միջոցն ու կամքը հասկընան, յա-
ւելցնելով թէ «բռնութեամբ ոչ կը-
րօնը կըլլայ եւ ոչ ալ ամուսնութիւն»:

Սրբազան հօր այս առաջադրութեա-
նը վրայ աղջիկը քաղաքական ժողովը
տարուել է, որ հրապարակաւ իր կամքը

յայտնէ. աղջիկն ալ հոն կառավարին եւ
ժողովին բոլոր անդամները տալիս ըսե-
թէ «ես իմ ծնողացս գիտութեամբ հի-
մա զիս ուղղ առնէմ հետ քանի մը տա-
րի է ի վեր նշանուած էի. այս անգամ զիս
մօրմէս զաղտուկ ու խաբելով Գե-
որգ անուն բողբոջականին տունը տարին
անկէ ալ բողբոջականաց ժողովարանը,
եւ հոն բողբոջական այրի բնակէր մը հետ
ամուսնացնելու ուզեցին: Ես մնալէն հի-
մա կոչում եւ բողբոջական չեմ եւ ըլլա-
լին ալ չեմ ընդունիր. հայ եմ եւ իմ հայ
նշանածս ինչպէս եւ կընդունիմ»:

Պատա-
վարին ու ժողովը աղջկան այս խոստո-
վանութիւնը (թաղիւր) լսելով, հոն ներ-
կայ եղող հայ իշխանին յանձնէր են որ
առնէ իր տունը տանի: Ես եղելութիւ-
նը կրկին Սրբազան Պատրիարքին զրկե-
լով՝ տեղւոյն կարգաւորացը եւ իշխաննե-
րուն հրաման դնաց որ աղջիկը տղուն հետ
պահեն:

Աւտի անոնք ալ Սուրբ Եկեղեց-
ւոյն պահանջած օրինաւոր կերպով պը-
սակել են քաղաքին բոլոր հայ ժողովու-
րեան առջեւ մեծ հանգիսի:

Ես պատմութիւնը ինչպէս որ յայտ-
նի կը տեսնուի, Լեւոնի մէջ հրա-
տարակաւ ընկած բողբոջական տարբեր է: Սկր-
այս գրածին ու յիշեալ լուրերն պատ-
մութեանը մէջ եղած զգալի տարբերու-
թիւնները մի առ մի չի քննած ու չի հեր-
քած, արձակ համարձակ հրատարակե-
լով՝ մեր արդոյ ընթերցողները կապա-
հօղորդենք, որ մեր ըրած պատմութիւնը՝
մեր առատագուծ տեղութեան արդա-
րասէր կառավարութեան հսկողութեամբ
բոլորովն առնէ Թեքրիտաղի կառա-
վարին ու քաղաքական ժողովին եւ նոյն
առող տեղեկութիւնները Ենգիւն պե-
մախալ դեպքանին ալ հաղորդուած է:
Ես կարեւոր լուրը ի լուր աշխարհի
հրատարակելէն ետեւ, սկսեց Լեւոնի
Գ. խմբագրին տուած տեղեկութեա-
նը անտեղի ստույթիւնները մէկ առ մէկ
քննելու:

Ե. Յիշեալ Գ. խմբագիրը «եղած-
ները պարզապէս ասոնք են», ըսելով՝ կը
պատմէ թէ Ռոտովի բնակող բրո-
թիսթանդ մը մօտեւ ամուսնացաւ (ա-
ռանց ժամանակ եւ օրիցընկելու) Հա-
յու մը աղջկան հետ՝ իր ծնողքին ու-
ղերմ ու հաւանութեամբ, եւ այլն.
ու հարանքին արարողութիւնն ալ կա-
տարուած ժամանակը նշանակեցին Հա-
յու բնակիչները ալ:

Ես խօսքերուն մէջ երեք տեսակ
անտեղի ստույթիւններ կան: Առաջին.
մեր տեղ եւ ուր քրիստոնեայ ազգի մէջ
տեսնուած ու լուծած բան է որ տարբեր
կրօնք եղող այր եւ կին առաջուց եր-
կար ժամանակ իրար չտեսնած չի ծանօցած՝
փայրելան մը մէկ զմէկ տեսնելուն պէս
պահուին, ու երկուքն ալ իրենց ունե-
ցած կրօնքին մէջ մնալու համար իրար
համոզելէն ետեւ ալ նաեւ քաղաքական
ստեղծանքն առջին հաստատ օրէնքնե-
րու հպատակելով՝ իրարու հետ դաշնը
չընեն:

Հայերը՝ սմբրիկացի քարոզիչները
իրենց մէջ չտեսնած, ու անոնցմէ մէկ քանի հա-
զար տարի առաջ քրիստոնեայ եղող աղ-
ջի մը նոր քրիստոնեութիւն սովորեցնե-
լու անօրինակ ու ինքնակոչ բարերարու-
թեան մը վնասներուն եւ վտանգներուն
ենթակայ չեղած, անշուշտ չէին կրնար
մտածել, որ մարդկային ընկերութեան
ամենէն հաստատ ու սուրբ միաբանու-
թիւնը որ ամուսնութիւնն է, ասանկ տար-

բեր կրօններէ միացած մարդոցմէ բաղ-
կանալով՝ բնականաբար մէջ անուր ու ան-
խնդ պատահալութիւններ կը ծագին, եւ
ծնողաց ու զաւակներուն մէջ կատարեալ
դատարակութեան ու քաղաքակրթու-
թեան ամենէն զօրութեամբ միջոցը որ քը-
րիստոնեական կրօնքին սովորեցուցած բա-
րոյականն է, այլայլելով կը խանգարի,
վասն զի անհնար է որ այն ժամանակը ծնող-
աց մէջ կատարեալ համախոհութիւնը
չի վերանայ, ու հետեւաբար հայրն ու
մայրը զաւակներին իրենց ընդունած կը-
րօնքին կրթելու գաղափար վախճար մը չու-
նենան: Բնականաբար երկպառակութեան
այս փաստակար սերմերը մեր ազգին ըս-
կողքնաւորութիւնէն զեր մինչեւ 15 տարի
առաջ իր մէջ ցանուելը տեսնուած ու
մտածուած չըլլալուն, ասանկ տարբեր
կրօնք հարսն եւ փեսայի պահանքն ալ
կանոնաւորելու համար մեր ազգին մէջ
երբեք քաղաքական օրէնքներ հաստատ-
ուած չէր, եւ ասիկ ետքեւ Լուսաւոր-
ակոն հայոց մէջ բնաւ ըլլալը չունի:
Աւտի թէ որ այս անգամ Թեքրիտաղի
մտացածին ամուսնութեան դէպքին մէջ
ասանկ բան մը իրօք պատահեցէ եւ թէ
որ երկու կողմին համութեամբ եղած
էր, հարկ վրայ որ գոնէ եկեղեցական
եւ ազգային տեսանկիւնով մէջ հարկա-
ւոր եղած գաղափար ընեն: Իսկ ինչ-
պէս որ վերի պատմութիւնն անանք եւ
ասիկ ետքեւ եղածներուն քննութեան
պիտի տեսնենք, այս մտացածին ամուս-
նութիւնը իրօք եղած չէ, որ պէտք եղած
օրինաւոր կարգադրութիւններն ալ վերն-
տրու ունենալու կատարուելին:

Երբոր Գ. խմբագիրն «այս ամուս-
նութիւնը իր ծնողքին ուղերմ ու հա-
ւանութեամբ եղաւ», ըսած էր: Ես խօս-
քին ալ որչափ ճշմարտութեան զուրկ
ըլլալը հարկ չէ նորէն քննել. արդէն
մեր պատմութիւնն յայտնի եղած է որ
աղջկան միակ մայրն ալ՝ ոչ միայն ներ-
կայ չէր այս մտացածին հարսանեացը,
այլ եւ բնաւ ծանօթ անգամ չէր անոր
ամուսնանալու զացած ըլլալուն, եւ ուր
անդ ըլլալն ալ հասկընալով բաղնիքէն
փախցունելն ալ անփախելի ապացոյց մըն է
ասոր:

Երբոր Գ. խմբագրին «այս ամուս-
նութեանը նաեւ հայազգի բարեկամներ ալ
ներկայ էին», ըսելով թէ որ Լուսաւոր-
ակոն հայերուն համար ըսած կը հա-
մարի զինքը, մեծ սխալ մը ըրած է. իսկ
թէ որ աղջկան մայրը խաբող Գերձակ
Յարութիւնին անգամ կինն ու անոր
երկին եննէ, անոնք ալ բողբոջական հա-
յու եւ հետեւաբար դորձակից կը սեպ-
ւին այս մտացածին ամուսնութեանը. եւ
արդարեւ մեր ճիշդ պատմութիւնն ալ
կը հաստատէ, որ արդէն աղջիկին բո-
ղբոջական մը տուած են եղել:

Աւտի Գ. խմբագրին հայազգի բարե-
կամներն են ըսելով զրոյն վկայներ
բերուած չի համարուելով իրենց մէջէն
եղած կըլլայ, որոնց վկայութիւնը մեղի
համար բնաւ զօրութիւն մը չի կրնար
ունենալ:

Մայիսի 10-11-12-13-14-15-16-17-18-19-20-21-22-23-24-25-26-27-28-29-30-31

ԽԱՆԵ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսական ինքնակալին աղջկանց նշան-
առքի հանգէտը ապրիլ 10/22-ին Լուսաւոր-
այ Թիֆլիսի Կառավարութեան հանգէտն ալ մայիս 16/28-
ին պիտի կատարուի:

